

# THE BIBLE

לְפָנֶיךָ יְהוָה

ՔԱՐԵՎԵՆ, ԵԶԳԵՅԻ, ԲԱԼՈՒՔԵՆ, ԵՒ ՏԵՒՏԵՆ

Տարեկան գին Կանիքիկ Ղրւ.ռ.ու.շ 100 : Վեցամսեայ գին Ղրւ.ռ.ու.շ 32 ½ : Եռամսեայ գին 26 ¾ :  
Հինգ տոտագիրու.ոց գ.տնոցին մէկ օրինակ իրեն ձրի դիմուի :  
Այս Լրագիրը ամեն շաբաթ օրերը կը հրատարակուի :

Պօջիսէն դու.րս գացած Լրատ.իրերու.ն Փօսթային ծախքը առնօցին շրայ է :  
Իր շահին համար չու.ր մը հրատարակից ո.քացց դիտի վճարէ տօղին 40 փարայ :  
Նորաւոյի գլոց ծանուցու.մց ձրի է : Դու.րսէն եկած նամակներու.ն Փօսթային ծախքը իրերաց դիտի վճարէ :

# РУССКИЙ

## ‘T B F P T T L A T P B F

## ՊՕԼԻՍ 11 ՀՈՎՏԵՄԲԵՐ

Ղ բագրայս նախնամթաց թիւերուն մէջ արդէն  
ծանուցեր եւմբ լիովին մեր հետաքրքիր ընթերցողա-  
ցը, ՚Բիւրտիստանի ապստամբ պէշերուն բանուի-  
լը, Պօլիս գոլը և պայմենին խօնակը մէծ զբուշութը  
սրահուիլը . հիմա ալ կը փութամբ հրատարակելու  
որ մէծաղօր ինքնակալը զանոնք պատճելու և միան-  
գամայն իրենց տաղուկալի ճամբան հետեւողներուն  
օրինակ մը տալու համար բաւական համարեց առ  
այժմ որ արտորուին : Ուստի այս բարձր հրամանին  
համեմատ երկուշաբթի օրը Վահմանու խաննը՝ Ուուս-  
ձուխ, և Պէտէրհան պէշյը՝ Կիրիտ արտորուեցան : Եշ-  
հա վերջապէս առին իրենց ըրած յաղթութիւննե-  
րուն արժանի պակլը :

— Այսած տարի յորենը աղէկ ծախուելով երկը բարդ ործներուն ձեռքը մանաւանդ Ուումէլի կողմը շատիկ ստակ անցած ըլլալը ամէնուն յայտնի էր . ուստի Ուզունձա օվայի տօնավաճառին (բանացիրին) աղէկ գնով ծախելու յուսով շատ ինչք տարին : Յէկպէտ վաճառականներուն յցոր անհիմն չելաւ , շատ մարդոց բազմութիւն եկած էր տօնավաճառը . և շատ ալ բան ծախուեցաւ . բայց գոյցած ասպարնքներուն շատութեանը համար գինելը կուպելավ առջի տարիններուն շափ շահ չեղաւ :

— Ո՞ւծաղօր տէրուե՞ ամէն երեւելի պաշտօնաւաստիճաններ իրենց պաշտօնինեւ աստիճանին համեմատ պատուանուններյատկացած էր, որ պաշտօնաստիճաններուն ամէն մէկուն խրկուելու գրեթուն մէջ ինչ պատուանուն դրուելուն վրացօք շփոթութիւն մը ըստ լոյ և Ասոնց վրացօք տպուած ցանկին մէջ տրուած պատուանունները մինչեւ ժայժախամբ պատուացն կը հասնեմ . անկեց զար աստիճաններուն, ինչպէս ճն պին պաշշէ, ալյա էմինի, վէճա վէ ալյա վէ թաղոր-թաղոր վէ իմամը, ուշ ալյաը, իւշ պաշշը, անձախար, եսվապ էմինի և միւլպէմ, ամէն մէկուն իրենց յարմար պատուանուններ որոշեցաւ . որպէս զի ասոնց ամէն մէկուն թէ իրենց հաւասարներէն և թէ ուրիշներէն գիր մը գրուելու ըլլայ նէ՝ այս բառերս գործածուին :

— Անձազօք ինքնակալը՝ Պաղտատու կողմը գըռ-  
նուած իր կրօնքին երեւելի մարդոցը գերեզմանը  
զարդարելով պատուելու համար արքայական փողե-  
րանոցը (զարպիսանէն) արծաթէ և ոսկիէ ծանրա-  
գին զարդեր շինել ապրանքաբած էր : Հիմա անոնց  
շինուելը լըմինալով՝ յարմար տեսնուեցաւ որ մէկ  
յատուկ պատուաւոր մարդու մը ձեռօք անոնք  
խրկուին, որպէս զի աւելի մեծ պատիւ եղած ըւ-  
լայ : Ուստի այս պաշտօնս կատարելու համար ընտ-  
րուեցաւ Պաղտատու բարձրապատիւ կուսակալ  
Նէճիկ փաշային տղան Շէմիլ պէյ էֆէնտին, որ  
բարձրագոյն դրան ամէքի գիւանին գործակալներէն  
է . և տէրութեան գործակալաց առաջին կարգի  
երկրորդ տատիմանի պատիւը տրուելով՝ մեծազօք  
ինքնակալին հրամանաւ այն աստիճանին համեմատ  
պատուաց նշանն ալ իրեն չնորհեցաւ :

— Այստոպի այժմեան կուսակալքարձրապատիւ  
Ուսդափա փաշան իւր կառավարութեան երկիրը  
համեւլով՝ նախկին կուսակալքարձրապատիւ Քեա-  
միլ փաշայն երկրին կառավարութիւնը ըստ օրինի  
անոր կը յանձնէ, և անոր գացած շոգենաւովկը՝ ար-  
քայազուն իշխաններուն թլփատութեան հանդէ-  
սին վերջին օրեւր կոստանդնուպօլիս կը հասնի: Այս  
անձս ամէն կերպով մեծազօր տէրութեան հաւա-  
տարիմ ծառայութիւն ըրած ըլլալով՝ բարեգութ  
ինքնակալին յատուկ հրամանաւը արդարութեան

գերագոյն առենին անդամ անուանեցաւ

— Իմշկապետ արժանայարդ Խսմայէլ էֆէնտիին  
պատիւը՝ որ առաջ առաջին կարգի երկրորդ աստիւ-  
ճանն էր, հիմա իրեն հսւաստարիմ ծառայութեան-  
ցը համար մեծազօր ինքնակալին հրամանաւը նոյն  
կարգին առաջին աստիճանին բարձրացաւ . և այն  
աստիճանին յատուկ եղած պատուց նշանը իրեն ց-  
նորհեցաւ :

— Հալէպու եկամսից տեսուչ (մալ միւտիւրի) Հիւսէին Ռուշի էֆէնտին մեռած ըլլալը լըսուելով՝ անոր պաշտօնը յանձնուեցաւ Դայարդաստէ Ահմէտ պէկին, որ առաջ Այտանայի եկամբետից տեսուչ էր։

— Խիմիա կղղիին կառավարիչ Աթա էֆէնտիին այն պաշտօնէն ելլելը պէտք ըլլալսվ, անոր պաշտօնը յանձնուեցաւ ծովային զօրաց Ֆր ալյոնէրէն Պօղճա ատայի Հիւսէին պէկին, Ֆր էլ իւնէրայի պատուով։

— Խնչողէս որ օսմանեան մեծազօր տէրութեան  
ամէն երկիրները յունաց թագաւորութեանը կող  
մէն գտնուած չօնօշներուն ձեւաքի արտօնութեան  
գիրերը (պէրաթները) առնուեցան, նմանապէս  
այս օրերս Ուլահի և Պուղոտանի երկիրները գտնուազ  
չօնօշներուն աւ նցյն գիրերը առնուեր են, ըսելէ ո՞ր  
յունաց այն տեղերու ծովեզերքը ունեցած առու-  
տութերնին աւ դադարերէ :

— Եկավու ամսայ 12 ին, որ է սեպտեմբեր 10  
Վանսագր քաղաքը սաստիկ անձրեւ գալով՝ քա-  
ղաքին մէջէն անցնող Տէրահուր ըստած գետա-  
կին ջուրը առաստացեր, վրան գտնուած կամուրջ-  
ներուն ամէնն ալքակեր վլցուցեր է, և երեք ալ-  
մարդ քեր տարեր է : Այն քաղաքին բնակիչները  
կը պատմեն եղեր որ, ասկէց 28 տարի մը առաջ  
մէկ մըն ալ ասանկ սաստիկ անձրեւ գալով քաղաք-  
նին այսպիսի վիասներ կրեր է . անկէց ՚ի վեր մին-  
չւ հիմայ ասանկ վիասակար անձրեւի առատո-  
թիւն տեսնուած չէ եղեր :

— Վարսուանի 18 սեպտեմբեր : Եմոցս 11 ին  
սաստիկ կարկուտ մը եկաւ հոս որ մինչեւ լնկուզի  
չափ խոշորները աեւննուեցաւ, տեղոց այդիներուն  
5 բաժինն 1 բաժինը աւրեց : Նյուոլէս կիւմիւշ  
մատենի, Չոռումի, Նշովոկիսայի ալ այսպէս վնաս  
ներ տուեր է : Ա'ըսուիթ թէ այն աեւզաւանքներուն ե-  
կած կարկուտներէն մինչեւ հաւկիթի չափի տես-  
նուեր է :

Ամասիայու և Եւգոկիայու կողմերը ամսայս վեցէնի ի վեր ժամանակ ժամանակ երկրաշրժութեան ցնցումներ կ'ըգդացուի եղեր այն կողմերէն եկող Ճանապարհորդներուն խօսքին նայելավ :

— ՚Քօվեա հիւանդութիւնը ՚Դրապու զանի կողմէ  
մերը այնքան քիչցած է , որ դադարած կրնայ սեպ-  
ուիլ : Ռազ օրը 10 կամ 15 հոգի կը բռնուեր ,  
հիմայ հազիւ թէ 3 կամ 4 հոգի կը բռնուին :  
Այս ալ գիտեր են որ , բռնուուղներէն ո՞լ որ կա-  
նուխիկէկ բժիշկի ձեռք ինկեր , և անոր պատուե-  
րը մոփիկ ընելով վարուեր է նէ՝ գրե՛թէ ամէնն ալ  
աղատեր են . և ասիկայ ալ հիւանդութեանը շատ-  
տիսրանալուն մէկ նշանն է . որովհետեւ ամառա-  
թիֆիլս քաղաքը սաստկացած քօվեա հիւանդու-  
թիւնը այսպէս բան մոփիկ չէր ըներ . հիւանդու-  
թենէ բռնուուղին բժիշկ հասցընելու գացող մար-

Դը քիչ կը պատահէր որ տուն դարձած ատենը  
հիւանդը մեռած չի գտնէր :

— Պալտառէն այս անգամ եկած գրեթէն կ'իմա-  
նալը որ՝ քանի որ այս անգամ այն կողմէրը Քըլուտ-  
հիւանդութիւնը սկսեր է նէ, այս հիւանդութե-  
նէս ամէնը 120 հոգի միայն մեռեր են : Ֆուանսը  
զի տէրութեան կողմէն հն նատող Քնաօւը, որ ան-  
ցած ասրի այս հիւանդութենիւս բռնուեր և ա-

զատեր էր, այս տարի ալ բռնուեցաւ և ազատեցաւ : Հիմա գոհութիւն Աստուծոյ հոն ալ այն հիւանդութիւնը օր աւուր վրայ տկարանալու և նուազելու վրայ է :

— 1 բագրաց նախընթաց թիւերուն մէջ ծանուցած էինք Խառնթալի սուրբ Աշան եկեղեցւոյն շատ մը ծանրագին անօթներուն գողցուիլը, այս օրերս նոյն գողցուածներուն մէջէն արծաթ տուփ մը տաճկին մը, իր ՚ի վազուց բարեկամ Խոսքիւտարցի Ծիւյսիւգեան Պ. Յօհաննէս անուն ոսկերիչին կը բերէ որ ծախէ . բայց տուփին մէջ գրուած յիշատակարանին վրայ աղնուատոհմ Փիշմիշեանց զարմէն մէկուն ընծան ըլլալը կարգալով, իսկոյն անունին տէրը կը գտնայ կը ցուցընէ, և այն տլշուտով յիշեալ կինը լապիդան կ'ինջեցունէ, կը յուսացուի որ աղէկ քննութեամբ ամէն գողցուած բաներն այ այս նշանովս լաբոնուին :

— Ճերտելի կանչպիս ըստած տաճկական լրագիւրը կը ծանուցանէ որ, ասկէց առաջ Պէջ օղունի փողյները կանթեղ կախելու և լուսաւորելու համար հաստատուած ընկերութիւն այս օգտակար բանիս համար ըստած ծախքը այն փողոցներուն բնակիչներէն չի կրնալ առնելով քաղաքուեցաւ, ասկէց եաքը փողոցներուն կանթեղները վառելուն վերակացութիւնը կառավարութեան կողմէն պիտի ըլլայ . և հարկաւոր եղած ծախքին համար՝ այն փողոցներուն վրայ եղած տներուն փողոցին կողմը նայող ամէն մէկ կանդունին համար առաջին 27 զուռուշ տուրք պիտի առնուի :

սահմանին ջրալից գործարանին (Հավուզին) մէջ նորու գոտելը և լրայ եղած ֆրառի սպիկը անուն ֆըռաւուն նաւը լոմինալը մօտեցած են . և ասոնք լոմինալէն ետքը երկու ուրիշ շոգենաւ ալ շինուելը պիտի սկըսուի , որտեղ ամէն մէկը չըրս հարիւր յիսունական ձիու ուժ պիտի ունենան :

— Կայսերական նաւախումբէն երկու նաւ՝ Քաղաքացին առաջ երեք հատ յցն ծովագալար կի (խուռանքի) նաւ բնաներ էին : Առող մէջէն եւ լող գողերը այս օրեւս կոստանդնուպոլիս իրկուելու բան :

— Իղմիրու տուաջ երկաթի վրայ կեցող նէլ էսէր  
ըստւած պատերազմական նաւը այս մօտերս Քուռ-  
քա ըստւած ծովածոցը գողի նաւ մը տեսնելով  
ետեւէն կ'իյնայ . գողերը հասկրնալով որ բանը գէ-  
շի պիտի երթայ՝ նաւերնին ծովեզերքը կը դարձը-  
նեն . նաւը հոն կը ձգեն , և իրենք ցամաքը դէպ ՚ի  
ներս կը փախչին : Անծաղօր տէրութեան նաւուն  
նաւազետն ալ ցամաքը տասն և հինգ հոգի կը հա-  
նեն որ ասոնց ետեւէն իյնան , բըռնեն և բերեն :  
Այսնք դուրս կ'ելլեն և կ'իմանան որ գողերը մէկ  
հովուի մը հիւղի (խուլիսկէի) տակ մտած պահ-  
ուած են , հոն կ'երթան : Գողերը չի կրնալ փախ-  
չելով , և անձնասուր ըլլալ ալ չուզելով՝ զէնքով ա-  
սոնց վրայ կը վաղեն , բայց ասոնց դէմ չեն կրնար  
դիմանալ . գողերը եօթն հոգի են եղեր . երեքը կը  
մեռնին , մէկը կը վիրաւորուի և կը բռնուի , մնա-  
ցած երեքը կը փախչին : Այսնք մեռնող երեքին մար-  
մինը հոն կը ձգեն . վիրաւորուածը հետերնին կ'առ-

— Վէկ նաւապետ մը Վիտոֆլի կղզիէն ձեթ  
(գէյթին եազի) առած ատենը պէտք եզածին չափ  
ըստակ քոլը չի գոնուելով՝ այն տեղի վաճառականն  
ներուն մէկէն՝ կրտսանդնուպօլիս ցըցուցած ստա-  
ֆին վճարելու պայմանով 7450 զուռուշ փոխ կ'առ

նէ կրտտանեղնուազօլիս կուգայ : Ա աճառականին այս  
դրամսոյ բօլցան իրեն հետ առուտուր ունեցող առ-  
տափէն կը խրկէ , գիր մին ալ նոյն նաւապետին տա-  
լու համար կը խրկէ . և մէջը գրած է եղեր որ՝ թէ-  
պէտ բօլցային մէջ պարող լրած բառակիդ վճարմա-  
նը ժամանակ տուած եմ , բայց ժամանակէն առ աջ  
վճարես նէ մէծ յարդ կը վասարկիս եայլն :

Այս գիրը այն ստուգին ձեռքը անցնելու աեզզ  
ինչև լցէ կերպով՝ Նիքոլս Ջուքիատիս ամսուն հոռ-  
մի մը ձեռք կ'անցնի, որ կը բանաց կը կարդայ . նա-  
ւագետին աեզզ կը սորմի, անոր նամակն ու բօշյան  
կ'առնէ կ'երթայ նաւագետը կը գտնէ և բօշյան կը  
ցրցնէ : Կառագետը նամակը կարդալուն վրայ՝ ըս-  
տակի տէր եղող մարդոց քով յարդութիւն վաստը-  
կելու գոտիքով քովք գտնուած ըստակը 6307 կա-  
զուուուշ կը հանէ այս Նիքոլային կուտայ, որ զի՞ն-  
քը այն ստուգին ազգական կը ցրցնէր . և մեացածն  
ալ քանի մը օրեն վճարելու համար թուղթ կու-  
տայ, բօշյան կ'առնէ, և զատ թուղթ մըն ալ կ'աւ-  
նէ՝ այնքան ստակը վճարուծ ըլլալուն համար :

‘Ալքոլան կ’երթայ , և նաւագետը մնացած ըստակը ճարդելով կ’ուղէ որ մարդը շուտով գառնայ , և այն ստակն ալ առնէ , և ի՞չքը պարտքէն աղասիք . բայց օրերը կ’անցնին . մարդը չերեւիր :

Այսիւլի վաճառականները բատակին և Բօլցային վրայօք սառածին տեղեկութիւն չի կրնալով առնել գիր մըն ալ կը գրէ . սառածիը բանը այն ատենը կ'իմանայ . կ'երթայ նաւապէտը կը դանէ . բայց սատեկը վճարած ըլլուղուն հաստատութիւն՝ ազատած բօլցային թուղթը և ստակը առնողին ստորագրութիւնը կը տեսնէ քովք : Սառածիը ասանք մտիկ ըններ . նաւապէտն ալ կը հասկընայ որ խաքուեր է , մտիկ ընել պիտի չի կրնայ տալ , քանի մի օրուան համար խօսք կրւայ կը ձամբէ . և ինքը կ'ըսկըսի Վալաթիա պտըտիլ , իրմէ այն ստակը առնողը գտնելու յուսով : Օր մըն ալ յանկարծ կը տեսնէ այս մարդը , աղջկէ մը կը նայի , կը ձանչնայ . և մօտ տեղի խօրացւըն մարդ կը բերէ բըռնել և Բօլցին տանել կուտայ : Հան եղած քննութենէն կը հասկըսուի որ նաւապէտը չէ խաքուեր . ստակը Վիքօլյէն կ'առնեն նաւապէտին կուտան . և Վիքօլյն բանուը կը դնեն , մինչեւ որ օրատիմքը պոշուի : Այս մարդն ասանկ խաքերացութիւնը իրեն ասպրուատ բերսղ և արուեստի մը տեղ սեպողներէն է եղեր :

— Անցածները սուլթան Աչհէմիշտի մզկիթին  
մօտերը լիւալէրէնինը՝ և մէջ հրդեհ մը պատահեցաւ, և մէկ երկու խանութ մը միայն աղատեցաւ. հինգառքթի գիշեր առտուան դէմ վերաբին հրդեհ մը պատահեցաւ այն տեղը և այս երկու խանութէն 'ի զատ ճանակ չի գտնելուն շուտ մը մարեցաւ :

# ΕΡΣΕΡΒΙ ΛΑΦΕΛ

**ԱՆԴՎԱԱ:** Նորընտիր բառլումենդը առաջին  
անդամ ժաղավարը ըրաւ սեպտեմբեր 21 ին . բայց  
առիկայ միայն մէկ սկզբնաւորութիւն մը ընել էր .  
բառլումենդին կարդաւորեալ ժողովան սկիզբը ը-  
հոկտեմբեր 12 ին ըլլավարը առաջիւց յայտնուած  
էր : Այս անդամին ալ ժողովայն նախագահը վեհա-  
փառ թագուհւոյն հրամանը կարդաց . որ բառլու-  
մենդին բացուիլը առաջիկայ հոկտեմբեր ամսոց  
12 ին ձգած էր :

ՈՐՈՇՄԱՆ : Ախովերիսա աքսոր գացողները առաջ հասարակ կառքալ կ'երթային : Հիմաց տրդարութեան վերակացուն կամ մեծ գաւառատանապետ իշխանը նոր կարգադրութիւն մը ըսեր է, օրով ՈՒ-պէրիայի կառքերը վեց սենեկակ բաժնուած պիտի ըլլան երկու կարգի վայ, չըրս կողմէրնին զայ . և երկու կարգը իրարմէ բաժնուլ միջնորդ զինուորներ պիտի կացնին, ձեռքելնին լցուն հրազդէնք ունենալով . և գիշեր ցերեկ միակերպ պիտի քշն, որ առաջ քիչ քիչ ճամբայ կ'ընէին . և օրը միայն մէկ անդամ մը կառքին մէջի մարդիկը դուրս պիտի հանեն . այն ալ միայն տասն բազէ դուրսը մնալու

սպայմանեղով։ Կաթ փոխելու հրամանը չի կայ . շարունակ ճամբար երթաղնուն՝ և ուղղվերնին ներ ըլլալուն համար հանդիսատ ալ չեն կրնար քննանալ . որով շատը արքարի աեղը չի հասած կը մեռնին : Եւ այս կողմէն հառկըցուեցաւ հաշուով , որ այս կերպով արքար գացոյներուն տառնենքն երկուքը ճամբան կը մեռնին կոր . որով ասոնց համար արքար երթաղու վճիռը մահուան գատապարտուելու պէս բան մը կ'ըլլաց : Ա-Ճիշկները յայտարար թղթով իմացուցած են կառավարութեաննը , որ ասոնց երկար ժամանակ զոյ մեռլը գտնաւած սենեակներինուն օդը կ'աւրէ . ոզներնին վրանին մնալով ևս առաւել կը գէշնաց օդը . ուստի այս կերպով արքար երթաղուներուն վրանապահար և մահաբեր ալ է . բայց Բօհեմիան տակա-

ւին այս կերպը կը շարունակէ . ըսել է ո՞ր կերպը  
փոխելու հրաման մը չ' առած : Պետք ուրդէն ՈՒ-  
պէրիա այս նոր կերպովս ճամբայ ընելով սալորա-  
բար երեք ամիսը կ'երթուի : Ծեծեւ պատիմնե-  
րակ . Ուուսաց յանցաւորներուն աչքը վախցընելը  
դժուար բան ըլլալուն համօր եղած է այս նոր կար-  
գագրութիւնը :

**ԲՐՈՒՏՄԱՆ :** Հինգ տարի կայ որ՝ Ծրումսիայի  
վեհապատճառաբին եղքայրը՝ Վլահէրդ Փրէտէ-  
րիք Հէնրի արքայացածուն իշխանը, զառ կը կենար  
իր կնոջմէն, որ է Հօլանտայի թագաւորին աղջիկը  
Կուլլէլմինա Փրէտէրիքա Առևիզդ Վա-  
րիան . և ասսնք երկուոքը այնքան ատենէ ՚ի վեր կը  
գդուշանային մէկ տեղչգտնու իւլցէ թէ մէկ սենեա-  
կի կամ մէկ պալատի մէջ, այլ մէկ քալուքի մէջ ալ:  
Թագաւորացածուն իշխանը ուր որ լրաէր թէ կինը  
հանէ, ինքը այն քաղաքը չէր երթար . կինն ալ անոր  
գտնուած քաղաքը չէր երթար: Վերջապէս արքայա-  
ցուն իշխանը կնոջմէն զատուելու և ուրիշ կին մը  
առնելու խնդիրը ըրաւ . և թագաւորը այս խնդրայո  
քննութիւնն յանձնեց արքայական ատեանի նախա-  
գահ գտնուող պաշտօնատար իշխանին :

# Ε.Ω.Φ. Ε.Θ.Ι.Τ.

Ազգի մը մէջ կրթութեան բարի նախանձ մը որ մանէ նէ, բաւականութիւն չունեցողներն անդամ նոյն բարի նախանձէն ետ չմնալու ձար մը կը դրանեն : Ձօսկիսափութ սուրբ Սիկողայոս եկեղեց ժողովուրդը որպասի որ առաջիւղ հետէ գարս

ց սովորութել որպատ որ առաջընուց հօտու գլուխա-  
տուն ունէին և աղաքնին կը վարժուէր ալ նէ ,  
այս մօտերս ուրիշ աեղուանց նայելով ուզեցին որ  
իրենց դպրատունն ալ աւելի բարեկարգ կերպով  
մը պայծառացընեն և ալէտք եղած կրթութիւնն  
ու ուսմունքը մըսցընեն մէջը : Հայց կարսդութիւնն  
նին չօդտելուն համար՝ խնդիրը ըրբն ամենապատիւ-  
տէր Ուսութէսս սրբազնն Պատրիարքին , որ բարե-  
հաճի անդամ մը իրենց թաղին սուրբ եկեղեցին  
գնալու և ժողովրդեան վիճակը հասկրնալու , յու-  
սալու՝ որ նորին վեհութեանը գալաւենէն անպը-  
տուղ չեն ելլէր , այլ նաև ազգասկիռական խնամքէն  
մեծ օգուտ ալ կը քաղեն . և յիրաւի յստ ընել-  
նուն չը խաբուեցան : Քանզի նորին վեհութիւնը  
այն ազգաստ ժողովրդոց խընդիրքը սիրով ընդու-  
նելով անցեալ շաբաթ օրը որ էր հոկտեմբերի 4 .  
Ժամ 8 ին այցելութեան գնաց թօփիսափու Ուսէ-  
սեան յարդապատիւ Յակոբ աղային բնակարանը ,  
որ այս ամառ օդափոխութեան համար այն կողմը  
թառէին թաղը կը նստի : Կիրակի առաւօտուն ի-  
ջաւ սուրբ Նիկողայոս եկեղեցին . և փառաւոր հան-

գէսող ժամերգութիւնը կատարելէ զատ իր հստերութիւն վարդապետութեամբը միխթարեց ժողովուրդը հայրական խրատովը քաջալերեց և դպրատան վրայ ունեցած բարի նսխանձնին ալ եվլոք վառեց օրսերնուն մէջ ։ Ուստի ապա դեռ չէր տեսած ասանիկ մէկ հանդէս մը որովհետեւ մինչեւ ցայսօր նցյի եկեղեցին Պատրիարքի մը չնորհաբերութիւն վայելած չունէր ամենեւին . ուստի մեծու պղստիկ բօլորն ալ եկեղեցին Եցկէր էին չերմեռանդ փափաքով, և ուրիշ տեղաց ալ լատիները եկած ըլլալով սեպէ թէ եկեղեցին չըբաւեց Ժողվարդ բած բաղմութիւնը պարտըկելու :

Վկեղեցին աւարտելէն ետքը նորին վեհութիւն  
գնաց դպրատունը և հոգաբարձուներն ու իշխանները ժողվելով հարցուց քննեց գտնուած վիճակնին, և իր ընդաբոյս աղդամիրակիան եռանդը շարժելով՝ անոնց մէջէրնին ըրած ընկերութեանը հաստատութիւն տրվաւ ինքն ալքաժանորդ գրուելով. և ասկէց զատ իր քալը գտնուած սուրբ Պանդալէնի բժշկին և Երմաղեայ քահանային հրաշագործ մասունքները շնորհեց նոյն դպրատանը յիշատակ, այս պայմանաւ, որ նոյն եկեղեցւոյն յատուկ եղած ուխտի օրէն զատ՝ որ է կիրակի, հինգշաբթի օրն ալ այս սուրբ մասունքներուն համար ուխտի օր յատկանայ. և այն օրուան ուխտաւողներուն նուիրած իւղագին և Առաքելի արդիւնքը դպրատանը

ըլլայ . ուստի ընկերութեանն ալ անուն դրաւ , ընկերունիւն սուրբ Պանդալէոնի : Եւ որովհետեւ նոյն սուրբ եկեղեցւոյն տօնախմբութեան օրը ձմեռուան մէջ կուգայ , սուրբ Նիկողայոսի սքանչելագործին տօնի օրը , և օգոստ գէշութեանը պատճառաւ այն օրը ոչ ուխտաւորները հանգիստ կրնան ընել , և ոչ եկեղեցին իր տօնախմբութեան հանդէսը արժանապէս կրնայ կատարել : Ուստի արժան սեպեց որ նոյն եկեղեցւոյն տօնախմբութեան օրը փոխադրուի իր այս անգամ հնան գնացած կիրակէի օրը . որ Վարագայ խաչին հետեւեալ կիրակին է . օրակէս զի ասկէց եաբը ամէն տարի այն օրը փառաւոր հանդէս ըլլայ նոյն սուրբ Նիկողայոսի եկեղեցւոյն մէջ ուրիշ երեւելի եկեղեցիներուն նման . գտնուող սրբազնն Պատրիարքներն ալ իրենց գալատեամբը պայծառապարդեն այն հանդէսը : Եւ այս բարեյարմար անօրէնութիւնները մշտնշենաւոր հաստատութեամբ մնալու համար նորին վեհութիւնը իրեն Պատրիարքական կոնդակաւոր Պօլայոս մէջ գտնուած բոլոր եկեղեցիներուն պիտի հրատարակէ , որ ամէն մարդ գիտնայ եկեղեցւոյն տօնախմբութեան նոյն օրը կատարիլլու . և այն տեղի ժողովութեան ուսման փափաքը տեսնալով , ազգասէր անձինք ջանք ընեն նըպաստամատոց ըլլալու այն դպրատանիլ կարօտ վիճակին : Ալ ուրիշ պէտք եղած բարեկարգութիւններն ալ հետզիւտէ անօրինելու և գործադրելու խօսք տալով նորին վեհութիւնը անսպատմելի ուրախութեամբ լցուց այն աղքատիկ ժողովը դոց սիրազ , որ սեպէ թէ իրմէն բաժնուիլ չէնուուղեր . քանզի թէ գալու և թէ գնալու ատենը փողոցներուն երկու կազմը շարուած , իրենց երախտապարտ նորհակալութիւննին կը ցուցընէին խոնարհական կերպութիւննին , և լիաբերան օրհնութեամբ կերպ կերպ բարեմաղթութիւններ կ'ընէին առ Արտուած նորին վեհութեանը համար . որ ասոնք անօրինելուն ետքը փառաւոր հանդէսովմը կրկին վերոյիշեալ յարգապատիւ աղսյին տունը գնաց , ճաշելու և իրիկուան գէմ ժամ 9 ին վերագարձ ըրաւ իր տեղը , մշտնշենաւոր յիշատակ մը ձգելով իր աղդամափրութեանը ու ուսումնախրութեանը և աղքատագրութեանը , որ բնաւ մնաւանալիք չունին նոյն թօնիխափութիւ գտնուած ժողովուրդը այս իրենց եղած շնորհը որուն 'ի սկզբանէ հետէ կը փափաքէին :

— Ազգիս մէջ տեղ տեղ տեսնուած ու սումնական յաւատչագիմութիւնը , և ամէն երկրի բնակչաց վասփառանոցը արթը լնալը , որ ամէնքն ալկ'ու վէն դպրատուններ և վարդապէտներ ունենալ , մեծ յոյս կուտայ մեզի որ քիչ ժամանակէն ետքը այն աւաղելի տգիտութիւնը որ մեր ազգին ուսումնասէր բնաւորութեանը դէմ արտաքին պատճառներով զօրոցեր և բռնացիր էր վրանիս , կը ակարանայ , և կամաց կամաց բոլորովին կը վերնայ : Պատճառուները վերնալէն ետքը գործն ալքիչ մը ժամանակ քըշէ ալ նէ ի հարկէ կը վերնայ , թէ որ արմատացած ըլլաց նէ : Վեր ազգին մէջ տգիտութիւնը բնաւ մէկ ժամանակ մը արմատ կապած չէ և չի կրնար կապել . հինգերորդ գարեն եաքը՝ որ մեր հայերէն գիրերուն գտնուած ժամանակն է , և հայերէն գոյրութեան ասին գարն է , մինչեւ ներկայ ԺԹ երօրդ գտըր , որ 1500 տարիէն աւելի է , ազգերնիս շատ նեղութիւն քաշած է . պատերազմ տեսած են , իրենց հայրենի երկրէն տարագիր եղած են . նեղութիւններէ ազտատ մնացած ժամանակնին քիչ է . բայց մէկ անգլանէմք նէ՝ կը տեսնեմք որ բընաւ մէկ ատեն մը չէ եղած որ ուսումնական և իմաստուն մարդիկ պակաս ըլլան ազգին մէջէն : Օրինակի համար մէկ հատը միայն յիշէմք : Յովհաննէս կաթոլիկոսին պատմութեան գիրքը կարդա՛ . որ առաջ ձեւագիր ըլլալով ձեռք ձգելը գետուար բան էր , բայց 1843 ին սուրբ Կյուտօնաղէմի տարաբնը տպուած ըլլալով հիմա ուղող կրնայ գիրերաւ ձեռք ձգել , և առանալու և կարդալու արժանի մէկ գիրք մըն ալ է . հեղինակին հմատութիւններուն վրայ կը զարմանաս . բայց այն ալ կը գտնես որ իր ժամանակին անցքերն է գրածը . և կը տեսնես որ Բնչ նեղ ժամանակի մէջ Բնչ հմուտ մարդ մը ծաղկեր է . մէկդիէն արագացի խոլիքիններուն կողմէն Հայատան եկողոստիկանները Յուտուփայ և Ամիշնի պէս . որոնցիմէ ոմանելք իրենց օրինաւոր իշխաննէն ազտատը եւլով իրենց ինչք և զօրք և զօրութիւն ճարելու համար ազգեր կը նեղէին . մէկ կողմէն սպարսիկները . մէկ կողմէն Հայատան մէջ տեղ տեղ ինքնիշխան թագաւորներ նատելը , և այլն : Աստիճ բաներ եղած երկիրներուն մէջ , որ ամէն մարդ իր գլխուն ճարը հոգալու պիտի նայի , մեծ զարմանք չէ մի որ Յովհաննէս կաթոլիկոսի պէս մարդ ելլէ . այն ալ մէկ հատիկ չէ . նոյն գարուն մարդիկն են սուրբն Գրիգոր նարեկացի . Ստեփաննոս ասողիկ . Արիստակէս լատիներացի . և ուրիշներ աղ : Այնայիտ

ատենաները անանկ ուսումնականներ ելան, և ուսումնասիրութեան ոգին ազդին մէջ կենդանի տահեցին և մշակեցին նէ, Կայս հիմակուան ժամանակիս վրայ որքան բարեցոյն ըլլալու եմք, որ մեծաղօրտէրութիւնը չէ թէ միայն կառարեալ թոյլուութիւնը պած է որ ամէն ազդաց պէտ մեր ազդին տրդայքն ալ ուսման հետեւին, այլ և բնիքնին ամէն ազդաց օրինակ եղած է ամէն տեսակ գիտութիւնները իր երկրին մէջ ծագիեցընելու մասնաւոր հոգտանելով. և առանց ազդի խորութիւն բնիքը՝ մեր ազդին մէջն ալ գտած ուսումնակուն և բարեկիրժմարդիկը առաջքաշելալ. և ասով ամէնուն առ հասարակ քաջալերութիւն տալով:

Ո՞է բան մը կար միայն մտածելիք . որ է գլու-  
րասուններուն պիտոցքը հոգալու համար պէտք ե-  
ղած գրանց : Այն մը ամէն մորդ իր տղան կար-  
գայթնող վարժապետին ամսական կուտար , ինչոք որ  
մինչեւ հիմա քանի մը մտանաւոր դպրատուններ  
կան . բայց եաքը ասար անցարմարութիւնը աեսնե-  
լով , որովհետեւ վարժապետներէն ամսնք աղայոց  
հետ չափազանց զիջմամբ կը վարուեին , որպէս զի  
իրենց քովէն չի փախցունեն , և անոնց բերելու  
շաբաթականէն չի զրկուին , տղան ոչ կարդալը  
պէտք եղածին պէս կը սորմէր , և ոչ ալ բարուցը  
մէջ ունեցած մոլի բնաւորութիւնը կը շնորհէր .  
ուստի այս կերպը առաջկու յարդը կարմնեցուց .  
աղգային գորբատուններ հաստատուեցան , և անոնց  
ծախորը աղգէն կ'ըլքար : Այն տոենք այս միջոցը ա-

զեկեր էր . հիմայ ալ տեղ կայ որ ասանկ մնալը աղեկ է , բայց ուրիշ տեղեր այս կերպավ ալ պէտք եղածին պէս չեր կինար նայութիւն : Անոր համար երրարդ կերպ մը մնածուեցու . գործառուն պէտք եղած տեղերը ընկերութիւններ հաստատել . որ ուսումնասէր մարդկիկ , և իրենց աղջոցը կրթութեան տակ խօֆելու փափոք ունեցողները այն ընկերութեանը կը գրուին , ամսական կամ տարեկան տուրք մը տալով , կամ միայն մէկ անգամ մը իբրեւ դրամագլուխ ստակ շնորհելով , որպէս զի այն ստակը շահի , և անոր շնհավը դպրատունը նայութի , և աղջոցը կրթութիւն : Այս երրորդ կերպը , որուն հիմակ ու ան ժամանակը ըրած օգուար բոլոր ազգին ճանչ ցուած րլութ տմէն տեղ ասանկ ընկերութիւններ շատնակէն կը հասկցուի , այժմու կրտանիքնալով այ զի համառ Պատրիարք Տ . Պատմէս ազգանէր Արքեպիսկոպոսին ջանիցը պատազն է . որ Պատրիարքութեան աստիճանին հասած ասենէն մինչեւ հիմայ անխոնչ աշխատելով , յորդորելով և խրախունելով , և գրեթէ ամէնուն ալ ինքն արդեալք ձեռ ընտու և օգնական ըլլալով , կրտանիքնալուց մէջ ընկերութիւններ շատոց . և գուրսերն ալ ամէն տեղ գրեր գրելով և յորդորելով՝ այս փափաքը ամէն տեղ արթնցուց :

Բայց սրբազնին այս ջանացողութիւններն ալ  
տնօգուտ կ'ըլլար, թէ որ չարժանապատիւ առաջ-  
նորդները նոյն փափաքով լեցուած ըլլային, որով Հետեւ կրնացին ասանկ բաներու արգելելներ պատ-  
ճառ բանելով այս բանէս ետ փափածիլ: Իսկ չեմք  
ուղեր որ մինչեւ հիմայ ասանկ ընկերութիւն չե-  
զած տեղեր կան նէ: այն տեղերու առաջնորդները  
անհոգացեր են. գիտեմք որ անմանց կողմանէ ան-  
հոգութիւն ըլլար. այլ այն տեղերուն յատուկ  
մասնաւ որ պարագայներ կ'ըլլան, որմիք ասանկ բա-  
նի պագելք կ'ըլլան: և ասանկ բաները վերցընելք  
ժամանակի՝ և այն տեղացւոց գործակցութեանը կը  
կարօտի: Այն բաներն են որ առաջնորդներուն  
փութոցը և ջանիցը խափանիչ կ'ըլլան:

Եմասիայու և Մարդուանու և Հւգոկից առաջ  
նորդ արժանապատիւ Տ. Յակոբոս Արքազան Աքք  
եպիսկոպոսը այս բանիս վայոք իրեն ընելու յոր-  
դորը առաւաւել ազգու ընելու համար ուրիշ ձամ-  
բայ մը բոնեց : Ճաղավրդեանը հարատանալուն  
կերպ մը ցըսուց առաջ, այդիներէն եղած շահն ու  
ճէկէն եղածը իրարու հետ բազդատելով հասկը-  
ցուց որ այդին առելի վիտոս կը բերէ . ճէկէն մշա-  
կելը օգտակար է, և այդիի արէս ալ մարդուն խել-  
քը գլուհն տանելու և բանի գործի անովխան ընե-  
լու բերք չի բերեր : Կառ համոզուեցան ժաղավր-  
դը . շատը այդիները քակեցին, ուղղ ճէկէն ցանե-  
ցին . օգուտն ալ սեան, և իրենց հսկեւոր Հօ-  
րը յորդորանացը հնազանդ գտնուելիուն պտուղը  
վայելցին : Կառ Արքազան առաջնորդնեն անոնց  
վաստըկածին անօրէն ըլլալու ալ իրաւունքը ունե-  
ցաւ . որովհետեւ իր յորդորանօրը վաստըկեցան :  
Աւսոի այս պարագայ այս յարմար ժամանակ գտանեց

Հան ալ գիտութիւնները ծաղկեցնելու սկզբնաւորութիւնն մը ընելու :

դայքը կրթելու համար մէկ նոր ընկերութիւն մը հաստատեց աժենայն պրեո անունով։ Ծնկերութեան վերակացու դրաւ Դանիէլեան Յալշաննէս աղայն Վարդուանցի, որ ուսման համը բաւական առածէ և և ասոր ալ հինգ օգնական տուաւ . որ են կիւլ պէկեան մահաւեսի կարապէտ աղայն . մահտեսի Արքահամ աղայն . Արագեան մահտեսի Վկրուիչ աղայն . Աժաէրեան մահտեսի Վանուկ աղայն . խաղնեձեան մահտեսի թագէսս աղայն : Եւ ընկերութեան գանձապետութիւնն ալ յանձնեց վերցի չեալ կիւլպէկեան մահաւեսի կարապէտ աղային : Եւ որովհետեւ Յակոբոս սրբազն Արքեպիսկոպոս որ ինքն ամէն առեն անձամբ Վարդուան չի կինար գտնութիւն, Այսափա և Թօվիսադ քաղաքներն ալ իր հոգեւոր հովուտութեանը յանձնեալ ըլլութիւն, և այն օրերն ալ Թօվիսադէն իրեն հրաւիրակ եկած ըլլարավ հան պիտի երթար, ուստի ինքը Վարդուան չի գրանուած առենը դպրատանը տեսչութեան գործը յանձնեց Հաճի գիւղի Վատթէսս շնորհափայլ վարդապետին : Թօվիսադէն եկող հրաւիրակն ալ առներ տեսնելով բարի նախանձ շարժեցաւ . և մրտքին մէջ հաստատածը այն օրուան հանդէսին մէջ բերնուլ ալ յայտնեց, որ իւր երկիրն ալ ասանկ ընկերութիւն մը սրբազնին ձեռօքը հաստատել տալու կը փափաքի : Բարի օրինակն ալ առանկ դիւրաւ աղքեցութիւններ կ'ընէ :

Սրբազն Յակոբոս եպիսկոպոսին խօսած յորդորանաց ձառին օրինակը այս է :

Արդ՝ ու անդքանիկ վիճակիս անդքանիկ սիրելիք հանդիսացեալ իշխանքդ Վարդուանու քաղաքիս . որ այսօր յայս հոգեւորախատուն խնճցիս մէջն Վարդուան քաղաքիդ տղայոց ծանարտակն արդուհալն ի լուր ամենեցունցո ընթերցաւ . իմ ալ հոգիս արծարծեցաւ . ահաւատոիկ ես ալ սկսեմ իմ խոցալի սիրոս բանալ առաջի ձեր սիրելիք :

Ունիմ և ես բողը և աղաղակ առաւել քան ըստ  
ձեր մանկունու . ո՞ր հայր լսէ և տեսնայ իւր զաւա-  
կաց անօթութիւնն և մշրկութիւնն սիրոն ար-  
եամբ չի լցուի . աղիքն չի գալարի ու չի կըսըրախ ,  
արտասուաց գետ մը չիջուցանէ աչքերէն , անհնարին  
կոծով և սդով վայ չի տայ՝ անձին : Ահա և ես նովին  
աղջւտիւք մաշիմ և ընկղմեալ եմ ՚ի լիձ և ՚ի ծով  
պատկառանոց և ամօթոյ որպէս զՊետրոս գոչեմ  
և աղաղակեմ մեծաւ . բարբառովթէ « Տէր փրկեան  
զիս զի կորնչիմ աւասիկ » :

Արդեօք օգնութեան ձեռքերնիդ կ'երկնցունեք  
մի ինձի . այս ամօթոց ծովէն կը փրկեք գուրս կը  
հանեք մի . որ սակաւ մի հոգի առնումք ու կարո-  
ղանամք փոքր ՚ի շատէ ձեռնոտուութեամբ ձեր իմ  
քաղցեալ և ծարաւի հոգեւոր զաւակացն պատառ  
մի հայ գիտութեան տալու , և գոնէ հասարակ գի-  
տութեան հանդերձ մի վրանին զգեցուցանելու .  
որ անոնք ալ զուարձանան փառաւորին իւրեանց ըն-  
կերաց մէջն , ու զձեր սիրոն ալ բերկրեցուցանեն .  
մանաւանդ . կը լսէն կ'իմանան յաննչն քաղցքս ՚ի  
գեղուկ տեղիս դպրոց բացուիլն և կ'առնեն յա-  
նակնունելի տեղեաց բուրել հոտ գիտութեան և  
իմաստութեան . տեսանեն զինքեանս զուրկ յայն  
անդին բարեմասնութեան . առանց յարդորման ձեր՝  
ինքեանք խնդրեն դպրոց և վարժապետ . կամի՞ք գի-  
տել մեր զբաղխութիւնն , բերեք առաջի աշաց ձե-  
րոց մերկ կամ պատառատուն հանդերձիւք անձն  
մի . և մէկ պայծառ և վայելուչ զգեստուորեալ որ .  
զերկուսեանն ՚ի հրապարակի առ միմեանս կացեալ .  
որքան մերկն անզգեստն ծաղու ծանակ լինի , այս-  
պէս ու մէք այլոց առաջնորդաց առաջն և ձեր զաւա-  
կունիքն այլոց հայկացեան մանկանց քովն մերկ և կո-  
լապաւտ ծաղու . ծանակ եմք . և լինիմք , եթէ թու-  
լումք այսող . ո՞ր մէծի և փոքր սիրու կարէ հանդուր-  
մել և զաւսպ ունիլ զինքն՝ որ տեսանիցէ զնմանիս իւր-  
ագնեան ու կապի ո անաւ թեան ունմասն ու մասն

ով ենալ զգեստիւք գիտութեան զանազան ուսման  
և լեզուաց և զանձն ունայն ոչ տրամեալ հոգոց հա-  
նիցէ , վայ և եղուկ կարգալով ոչ անիծեոցէ զօրն  
իւր ծննդեան . և կենդամի մնալն նորա մահ է մը-  
տընջենաւոր . ըստ որում նմանիք իւրեանց պատկա-  
լարգեալ նկարագրին հանդէս տեսութեան մուտցն  
ասաց , և ՚ի լրագիրս հանդիսափայլն գովութեամբ .  
միայն մերքն չերեւին ՚ի մէջ նոցա և ՚ի պարս նոցա,  
ով մէծի անարգութեանս և թշնամանաց :

էք . Ես որքան յօրէ անտի գալուտեան մերոյ յայս  
ձեր օրհնեալ վլճակն լառովը ուն ըղձակերտու-  
թեամբ ուսաւմնասիրութեան ձրագն պատերնուդ-  
մէջն վառելինդրէմ , բարեպաշտ սիրելիքդ իմ յօ-  
րէ յօր երկարածդէք և հանեք առաջի մեր կերպ  
առ կերպ խոցնելուս պատճառ անս . ոմն պատճառէ-  
ծանրութիւն քաղաքական հարկապահանջութեան ,  
միւն անցածը թիւնն և այլք բալըումք յուսու-  
հաստքաք մնուի առ թիւ իւր ծուլութիւնն նա-  
խապատռէ . և որ մեծն է եւրոպացւոց ճարտա-  
րամտութեամբ արհեստից քան զատկացիս ՚ի վեր  
անցանելն պատճառաւթանեն և լուսամենայնի զամեն-  
այն արհեստ և զառեւտառւրումք մեր անդամ խափա-  
նեցին փակեցին և վերջացուցին առեն . զինքեանս  
անմեղագրելի ցուցանել ջանան և այլն :

Այս լեռները յաջուղավաճառ է առ մինչ այս դաշտում կարդացեք ամեն մէ կուղայ յարմար վաստակ անել տալու միջոցներ կը ծանուց ցանե ։ մանաւանդ տպայքդ կրթելու յորդորուիլը քիչ վաստակ է մի ։ այս վաստակին համն և փորձն անսնք կ'առնեն որ զաւակաց խւրեանց փոխանակ բաղաւմ ինչս թողլց ուստաւմնականութիւնն առաքինսութիւնն կը թողօւն ։ անսնք կը առւգանին և կը վնասին ։ որ անկիրթ զաւակաց բաղաւմ ինչս թողը ունեն և այսն և այսն ։

Նաեւ կինամ լսել թէ հոգեւոր և մարմնաւոր  
պատժոյ և մեղադրութեան արժանի կ'ըլլան այն  
ծնողք, երբ որ անուսումն կը թողարկն առաջբնին։  
Դուք ձեզի ալ կինաք դատողութիւն լնելու ու-  
սումնականութեան յարգն ճանաչել. որ չէ թէ մի-  
այն հոգեւոր, այլ և մարմնաւոր օգուտ վաստակ և  
բարւոք ապրելու միջոց կ'ըլլայ մարդոց. բայց ըզ-  
ձեզ սրիսալօղն երբեմն բնասուր շնորհօք երեւեալ  
անձինք են. որք առանց խրառու և ուսման բարի  
լինին և հանձարեզ. սակայն անանիներն ալ ուս-  
ման տակ մտնան նէ մատամբ ցուցանելի կ'ըլլան.  
Հեռուեն յարացաց տամ նէ չէք դիտեր. ձեր մօ-  
տքն ձեր գիտցած մարդիկն օրինակ բերեմք, խոց  
Ճի փրմտածեան պարսն Վրիփորն ինքիփեն առ անց  
վարպետի քանի մի արհեստ գործէ. եթէ վարպե-  
տի սպասաւորէր գիտութեամբն առաւել ևս մա-  
տամբ ցուցանելի լներ. եթէ չհետեւէր, միայն  
հօրննայէր, միայն հօրն խալսցաւթիւնն սփափի գիտ-  
նար, թէ զինքն թէ հօրն թաղուցած որբերն դրժ-  
ուարաւ պահէր: Տեսէք պէտի՛ Յարութիւնն ինչ  
պէս աշակերտներ հասոց որ քաղաքիս մէջն գովելի  
երեւելի և հաւանելի լնուածս առնեն և բարւոք  
ապրին:

Գիտութիւնն ու արհետոն համապատիւ է բը  
նութեամբ ասեն իմաստասէլքը . ամէն մէկս բընա-  
կան ձիբըն ունենալիս անկարելի ալ է նէ , ուստի  
նականն ունենալ հնարաւոր է : Աւրեմն զարթիք  
զարթիք սիրելիք և ՚ի բաց ոստեալ ձգեցէք զանձի-  
նը ձեր ՚ի յանկողնոց անհօգութեան . արդիւնա-  
ւորեցէք իմ սրախն փափաքն որ ձեր ձեռնուուու-  
թեամբն կարեմ կատարել և այն և այն : Վորա ժմէ  
ոչ մէք ալ գուշ ալ սպանէլի և նախատելի լինիմք :  
Որով ՚ի խորս ամօնթոյ ծովուն իջանեմք . յայնժամ  
ազքաստութիւնն ոչ լինի ձեղ պատճառ անպատ-  
ուութեան . այլ ձեր երկչոս ծուլութիւնն և այն :  
Վագրէն ու աշացս լայ սիրելիք մեղի համաձայնեցէք  
ու զաւոկաց ձերոց առաջն օգտասկար խնդիրնին  
յետո մի գարձուցանէք . մարդոյս անունն համբա-  
ւըն արեան գինն է . խնայեցէք զմեր և զձեր համ-  
բաւն . մի ընդ վայր կրտսւանիցէք ՚ի հաւուց ան-  
տի ստացեալ բարեսպաշտութեան և քրիստոնէու-  
թեան բարի համբաւն ձեր . այլ զեկցիք զզօրու-  
թի ՚ի հոգւոյն որբոց զամենայն սուրբս և որբոց գը-  
լուին օգտասահատ թագուհին երինից զմիշտ սուրբ-  
կոյսն Վորուածածին բարեիսու ունելով՝ արիսցեալ  
քաջալերացարտւք՝ առատօրէն բառզիս սրախ գրիլ  
յընկերութիւն Ամենայն Արբոց դպրաստան Ար-

Տեր Յիսուս զձեղ և զօրհնեալ զաւակունս ձեր  
անանցանելի օրհնութեամբ օրհնեսցէ . Եօթնարփ-  
եան շնորհօք սուրբ հոգւցն լցուսցէ . զծնողս և  
Համայն ննջեցեալսն ձեր ՚ի հող տապանին օրհնես-  
ցէ և դշոգիսն ՚ի լոյս փառաց երկնից արքայութե-  
հանգուսցէ : || Պլ լերսոք և օրհնեալք յԱստուծոյ և  
յամենայն սրբոս նորա և ՚ի մէնց ամեն :

ԳԵՂԱԳՆԻ ՀԱՅՐԵՆ

Բնական արյած : Վաճառ-խոտանի Ա էրօվլեդիեր  
քաղաքը մէկ սաստիկ փոթորիկ մը ելբր է օգոստո,  
ի մէջ : Երեսուն կտմ քառաւուննի չափ տուներ  
իլեր են . եկեղեցին մը ծածքին վաս գամիշած պր  
լինձ տախտակները հովը քակեր և այս գիս այն զին  
ուտեր է . այն միջոցին թաքտու ( թուլումատ  
ին առանձ մէջ ուտակելու բանի մի հայ շ ֆին

# ЧАСТЬ ПЕРВАЯ

թօվ, քայլօն, և այլն) վերցուցեր հեռու տեղեր  
տարեր ձգեր է. Այս վասնեւաւոր արկածին առե-  
նը չառ աւմարդ մեռեր է:

— Եղանգավակին : Պ. Պրօրէն ասողաբաշխը  
մէկ նոր գիսաւոր մը տեսաւ , որ առաջինուց տես-  
նուածներէն չէ կը կարծուէր : Իսպա ասոր ընթաց-  
քին վրայ ճիշտ հաշիւ ընելով մէկ ուրիշ աստղա-  
բաշխն մը , Պ. Ֆէյ , գտաւ որ առաջինուց չի աես-  
նուած չէ . 1686 թուբին Հալլէյ երեւելի աստղա-  
բաշխը ասիկայ տեսած և ստորագրած է : Այս ա-  
պացցները Պ. Ֆէյ խաստացած է հրատարակելու .  
և թէ որ ըստածը ստուգուի նէ՝ 1686 ին տեսնուած  
գիսաւորին շընանը գտնուած կ'ըլլայ , որ մինչեւ  
հիմա գտնուած չէ : և ասիկայ ալ պըզափիկ բան չէ :  
Հալլէյ գիսաւոր մըն ալ տեսաւ 1682 ին և հաշիւ-  
ներավ գուշակեց այն ատեներ որ 1757 ին նորէն պի-  
տի երեւի . երեւցու , բայց շընանը Հալլէյին  
հաշուին վրայ առօրերութիւն ունէր , և ասոր  
պատճառը գուշակեց և հաշիւներավ ալ ստուգուց  
Քլէուծ , թէ մօտի եղած մոլորակներուն անհաւա-  
սար ձգողութենէն պատճառաւած բան մըն է : Հիմա  
թէ որ այս գիսաւորս ալ Հալլէյին 1686 ին տե-  
սածն է նէ՝ Հալլէյին տեսած երկու գիսաւորնե-  
րուն ալ շընանը գտնուած կ'ըլլայ : Այս գիսաւորս  
տակաւին մէրկ աչքով չի կրնար տեսնուիլ . երկ-  
րիս այնքան մօտեցած չէ :

— Արուեստական : Պ. | Կպէլմէն , որ Աէլք քաղաքը յախճապակի ( քառահուսի ) անօթներ շնորհը թափառորական գործարանին վարպետներէն է , մեծագիտն գոհարներ շնորհը վայ մատածեց . և իր խորհած կերպին փորձը ընելու համար կարմիր Եազու- դու- էնին սինէլը ըստած ուեռակը շնորհը ձեռք դար- իրաւ : Այս ծանրութին քարիս բաղադրութեան նիւ- թը քիմիագէտներուն ծանօթ է , որ ճականը և աչ- լու- մնէ ըստած նիւթերն են : Պ. | Կպէլմէն աշխա- տեցաւ այս երկուքը հալեցընելու մէկ տեղ , և կամաց կամաց պաղեցընելու , որ բիւրեղանան . քիչ ատենի մէջ պաղելով բիւրեղանալ չի կրնար ըլ- լալ . և այս որ շլլայ նէ Եազու- ըլլար : Եւ իր նպա- տակին հասնելու համար աչքո պօտիչո ըստած հան- քային թթուուտը դժաւ , որ առանց հեղուսկ ընե- լու կրնայ քակել ամէն հանքային թթուները ( օս- պիտօնները ) . և աչքո պօտիչո թթուուտն ալ սաստիկ տաքութիւնով կը ցընդի : Ուստի այս թթուուտը կրակով հալեցընելըն եաքը՝ պէտք եղած չափով հանդիպա- նական և ալլու- մնէն մէկ տեղ դրաւ մէջը , յախճա- պակիի փուռը սաստիկ տաք եղած ատենը բերանը բաց քուրայով ( բօթայով ) մը փուռը դրաւ : Ասով կլլայաւ Պ. | Կպէլմէն մէկ նիւթ մը հանել , սուռն ներսի դին մաներ վարդագոյն բիւրեղներ թանձա- ցեր էին : Այս բիւրեղները թափանցիկ էին . և փողով կրակի բաց վրանին փրչելով ( ինչպէս որ ու- կերիչները կ'ընեն բան մը փակցնելու համար ) , չէին հալեր : Խոշորացացով նայելով՝ կանոնաւոր ձեւով ութը երես կը տեսնաւէր վրանին : Այս յատկութիւններս նայելով ամենեւին չերկարա- ցի . Պ. | Կպէլմէն , թէ ասոնք Ճշմարտապէս կարմիր Եա- զու- դու- էն : Վիայն սա պակասութիւնը ունին որ շատ մաներ են . բանի չեն դար : Ասոր ալ ճարը գտնելու կը յուսայ յիշեալ վարպետը նիւթերուն չափը տ- եւ- լի շատցընելով , փուռը ու- մէ- ու- ի- ո ըստած կեր- պուր վառելով , ( որ բացը փրւանը ներսի դին ամէն կողմէն պատէ ) , և փուան մէջ քիչ մը շատկէկ կե- ցընելով նիւթը :

ջորենի առեւտուրը դրեթէ միշտ մի և նոյն վկասի մէջ է : Ո՞էկ մէկ քիչ բան տեղայս պիտոյք քին համար երբեմն կը ծախուի : Հետու տեղուանք տարուելու համար գիմացիուն ցորեն գրեթէ բնաւ չի գտնուիր հոս, ըլլայ ալ նէ առնող չկայ : Յիշրաւի անանի խօսք մը կը պատրափ որ Իուլանտա այս տարի ալ սովորական կասկած կայ բայց տակտուին այս ցաւալի լուրը չի հաստատուեցաւ ջորենին նայելով գարին քիչ մը աղէկ է, որավիճետեւ անպակաս Աքրիկէի կողմը գարի կ'երթայ :

Հարթուանս ցորենի գիտերը ասոնք են :

Եղօֆի	կարծր	զուռուռ	21 — 22 $\frac{1}{2}$
Պէսարաբիայի	"	"	20 $\frac{1}{2}$ 21 $\frac{1}{2}$
Ո-ումէլիի	"	"	18 — 19
Ո-ումէլիի	կակուղ	"	15 — 16
Կպրահիլ	"	"	12 — 15
Ո-սրացարեն	"	"	12 — 13
Դարի	"	"	7 $\frac{1}{2}$ 8 $\frac{1}{2}$
Հաճար (չալտար)	"	"	11 — 12
Եռալֆ	"	"	7 $\frac{1}{2}$ — 8
Ետքի երեք տեսակ հնտեղէնները խիստ նուազ			

Խայտաբեն զորենին վրայով գրուած սա կարծիք

ալ հոս կ'աւելցընեմք որպէս զի մեր հայազգի վա-  
ճառականները ասանել իրարու հակառակ կարծիք-  
ներ կարդալով անոնց մէջ տեղէն իրենք ուղղված  
ծիք մը հանելու կարող բլըսն : Խալասէն եկած գի-  
րերը ասանել կը գրեն “ Անդ զիսցի ու Գաղղիայի օ-  
բարձիրերուն՝ Խոլանտայի խղճութեանը վրայով բո-  
լոր պատմածները իրաւ են , ուրեմն Անդ զիսցի տե-  
րութիւնը հիմակաւընէ այս խղճութեանը առջել  
առնելու պարտաւոր է որ անցեալ տարուան ողբա-  
լի վիճակը կրկին չկանոն Խոլանտա :

Յերակա ամըռուան ու աշնան մէջ երեք միլ  
եօն կարօտեալ Խռանոացիք ինտոր ըլլաց նէ կրնան  
ասպրիլ իրենց երկրին բերքերովը. բայց երգոր ձմեռ  
ու ը վրաց դալսւ ըլլաց նէ, ան ատենն ալ պէտք է  
որ ասպրին ուրեմն Վնդղնայի տէրութիւնը պարտա-  
ւոր է որ անոնց սննդեանը միջոցները մտածէ թէ  
որ կ'ուզէ իւր այն աղքատ կղզիին խեղչ բնակիչ  
ները կերպ կերպ սոսկալի պատահառներէ ու մահ-  
ուան վտանգէ աղքատ պահէ, որովհետեւ անցեալ  
տարուան սովին պատճառաւուը չէր մի որ այնչափ  
հիւանդութիւններ մասւ այն կղզին ու բաւական  
կոտորած ալըրաւ : « Վրոնք խորհելով մեղի անանդ  
կ'երեւայ որ Վնկիլթէուաս այս տարի ալցորենի կա-  
րուութիւն պիտի ունենայ և իւր քովի եղած ցո-  
րենը ըբաւելովք դուրսէն ցորեն առնելու պիտի  
պարտասորի, թէպէտ մեկ քանի օրագիրեր կ'ըսեն  
թէ Վնկիլթէուա շատ համբարուած ցորեն կայ  
ծովի վրացի ցորեններէն ՚ի զատ որ անոնք ալ հոն  
կ'երթան : Չեմք մի յիշեր որ անցեալ տարի ալ  
շատ ցորեն կար Վնկիլթէուա և շատ ցորեն աղ-  
վարիկայէն և ուրիշ կողմէրէն կ'ըսպատէր բայց  
չի կրցաւ սովին դէմ դնել :

Այս խորհրդածութիւնը այս օրեւրա կւրոպացէն առաջ լուրերն ուս նայելով կ'ընեմք, անող համար հոս ալ ցորենին գինը քիչ մը սկսեց շարժիլ, սանկ որ մարացորենին գին տրուեցաւ 93 զուռուշ, ցորենին 140 զուռուշ, գարին մինչև 62 Կղմիրու շաբթուանս առեւտրական լուրերն ալ ասանք են ինչպէս նշանակեր է նոյն տեղի Արշարուան Առարատին առատուական լուագիրու :

ԶՄԻՒՈՆԴԱ 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Առեւտրական գործքերը բարեյաջող շարժում մը ունեցան անցած շաբթուլնե՞ ի վեր, և երեւելլ վաճառման նկները եղան գրեթէ ամէն տեսակ ապրանիքներէն։ Աֆիննը, որ քանի մը ժամանակ է խիստ հանդարտութեան մէջ էր, սկսաւ վիտուութիւն և անցած շաբթու 75 կողովի չափ վաճառուեցաւ 108—110 զուրուշի չէքին (250 տիրէմը)։ Դրեթէ 1000 հակ տարոն ծախուեցաւ 200—210 զուրուշի խանթարը ըստ տեսակին։ Շէհրին խիստ առատ է, և 150 քուրձ (չուվալ) ծախուեցաւ 20—21 զուրուշի հօիսան, այս գիներով գժուարավաճառ է Ոչխարի բուրդը քիչ մը կ'ուզուի, և 2000 խանթարի չափ վաճառուեցաւ 145 զուրուշի խանթարը չափանած միջակ ապրանիք խոկ պատուական տեսակին գիննը 158—162 զուրուշէ։ Պարեամզօլուի մետաքսը 130 զուրուշի հօիսան դիւրութիւն

կը վաճառուի : Յորենին և գարին գնոց նոր փո-  
փսիսութիւն մը չեղաւ մեր վերջի տուած ծանօ-  
թութենէն ետքը , որոնք միշտ հանդարտութեան  
մէջ են : Եոր հունձի բամպակը սկսաւ գալու , և  
քանի մը հակ վաճառուեցաւ 250 զուռուշի խան-

Հան յաջրդ չեն այս ապրանքին համար . այսու ամենայնիւ լ իվրուլիք մէջ եղած այս օրուան պահանուր (տէ փօզիթօ) խիստ քիչէ , քանիդ ընդ ամէնը՝ 410:860 հակի կը համնի . իսկ անցած տարի այս տուենս 665:900 հակ . բամպակ կար : ԱԵպտեմբերի 12 ին լ իվրուլիքն գրուած նամակները կը ծանուացնեն թէ նոյն շաբթուան վաճառմունքը 24:700 հակի կը համնէր , և գուրսերէն եկած ամէն տեսակ բամպակաց գումարը 9248 հակ էր : Դրեթէ 13 հազար խանթար փալամուտ ծախուեցաւ անցած շաբթու : Անդղիոյ տեսակը 57—58 զուռուշի պատրաստ դրամով . իսկ թրեստու տեսակը՝ 84—85 զուռուշի խանթարը : Ձուռզը սկսաւ հազրւագիւտըլլալ . քանիդ գրեթէ ապրանք չմնաց դուրսերը : Ոինչեւ ցայսօր ընդ ամէնը 15,000 բեռի չափ եկաւ , այսինքն 60 հազար խանթար . և վերջի գիները 75—110 զուռուշէին խանթարը ըստ տեսակին : Այսընի կարմիր չամիչը կ'ուղուի 70—75 զուռուշի խանթարը : Դպիրի չափակաց քաղաքներէն եկած կարմիր չամիչը՝ 80—85 զուռուշի կը ծախուի : Բամպակեղէն ձեռագործները (մանիֆաթուրա) կ'ուղուին . որոնց վրայօք Պալքքէսէրի տօնավաճառէն եկած լուրերը շատ յաջող են , ըստ որում խիստ քիչ ապրանք խրկուեցաւ այս տարի : Առաջ ժըմ քաղաքիս մէջ 6000 քուրձի չափ խահիլէ կը գտնուի , և դիւրութեամբ կը վաճառուի ըստ տեսակին 460—490 զուռուշի հարիւր հօխան : Հուշնտայի շաքարին գինը՝ 225—227 զուռուշէ խանթարը բայց այնքան չուզուիր . իսկ Անդղիոյ շաքարը 210 զուռուշի գիւրավաճառ է : Որդան կարմիր (գըրմըլ) մեծ հանդարտութեան մէջ է . թէպէտ և շատ ապրանք չկայ . այս օրուան արժէքը՝ 95—98 զուռուշէ հօխան : Իէշիափ բրինձը 22—22 ու կէս զուռուսւշ քիլէն , Աէնդիլէ՝ 19—19 ու կէս , Տիմիաթ 16—16 ու կէս դիւրավաճառ են :

# ՕԵՒԹՅԱՆ ՑԱԽՈՒՅԹ

Ա աշուան օրը, որ է հոկտեմբեր 12 թ-ամիսի գալորու սուրբ  
Խոսկեից շոյ դպրատան ուստի մասին աշխատաց պարեկան  
ժամանելի ու ըստ ըստ ըստ է, որ ուշաբներ են դպրուցին մշշ  
սորվածք ամեն բառերու գլայօս պատասխաննեն առելու պար-  
հարցման պիտի ըստ, և օրերը հարձ ըստ ըստ մի օր ու  
պիտի ըստ ըստ ըստ քննութելու, ուստի առաջին իրակի ու  
որ է հոկտեմբեր 19, նոյն քննութելու ամիսի շաբաթակիրքի:  
Ուշաբն իրաց այս երկու իրավիճակուն առնե՞տ դն առ գլո-  
ւութել:

Պէյօշը Ե՞ւ առ Ե՞ւ բայց ան Ա՞ս պօն Թօն Հ-  
ված քամանը կ աղաղան ի ը ծառուցանէ լի գարնան և յմ-  
ուան Եղանակներուն յարիկացած հանակ օօպա հագուստիւր և  
ո-ըի շաղանչներ ծախու հաներ է ։ Ինչպէս ։ Քիւպան, մէջ ման-  
իօ, կէս մէջչին մանիօ, շալ, չոլ, իւրապէս, իւսովիք, մէրի-  
նօդ, շաբազ, քարհու, սուս ծաղին, խոսկելս, իւսութելին,  
լանինէլս, խորհ, սուգի հագուստ, կէս մէջչին բուժամիսօ,  
ոսքի աման, յիւնոց, սոսելս- և հորորտլս- բաներ, և այլն։  
Աշուցմէ ի լադ առ առ ի ը ծառուցանէ որ, իւնայք Փարինէ

Տօգայի վրայօք ինչ հագուստ ողին նէ, ինչը վեհել իրաց առև  
իւ Փարթևել յարդիմադեմ բերել առաջ Տօգիսթաներուն :

ՀՐԱՏԱՐԱԿԻ ՀՔ ԼՐԱԳՐԻՍ  
ՅԵՒ. ՊՐ. ՏԵՇ ԿՐԴ. ԶԱՅՆ-Է.  
ՈՒԽԻՒՆ ԱՀԱՅԻՆ:  
Ի ՊԵՐԻ ՆԵՐ Ի ԱՆ:

---

ԿՈՍՏԱՆԴՆԱՏՊՈԼԻՒ